

Արձանագրություն 5

2014 թ. ապրիլի 18-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի հերթական նիստը՝ նախագահությամբ Ռ. Հակոբյանի, քարտուղարությամբ՝ Թ. Ասոյանի:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 26-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի պատմության ամբիոնի 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը:

/զեկ.՝ ամբիոնի վարիչ Հ. Հարությունյան/

2.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հասարակական գիտությունների ամբիոնի 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը:

/զեկ.՝ ամբիոնի վարիչ Լ. Քուրքչյան/

3.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը:

/զեկ.՝ ՀՄՖ դեկան Հ. Ղաջոյան /

4.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը:

/զեկ.՝ ՏՖ դեկան Ս. Ամիրխանյան

/

5.Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ պատմության ամբիոնի վարիչ Հ. Հարությունյանը հաշվետվության սկզբում ներկայացրեց տվյալներ ուսանողական համակազմի վերաբերյալ, ապա անդրադարձավ ուսանողների առաջադիմությանը վերաբերող խնդիրներին: Նա մտահոգություն արտահայտեց ընդունելության մասին դա պայմանավորելով երկրի սոցիալական և ժողովրդագրական վիճակով: Նշեց նաև, որ ամբիոնում աշխատանքները կազմա- կերպվում են պատշաճ մակարդակով, արվում է ամեն ինչ ուսման որակը բարձրացնելու նպատակով:

Հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ Լ. Քուրքյանը ևս անդրադարձավ առաջ քաշված հարցերին՝ հատկապես կարևորելով մասնագիտական հմտությունների ու կարողությունների զարգացման, մանկավարժական որակավորման ու պրակտիկայի, հոգեբանական խորհրդա-սովորությունների հետ կապված խնդիրները:

Հ. Ղաջոյանի հաշվետվությունը ներկայացված էր պահանջվող ձևաչափին համապատասխան: Նշվեց, որ ուսանողական համակազմի համալրման հարցերը մտահոգիչ են, մասնավորապես քիչ է պատմության և իրավագիտության բաժիններն ընդունված ուսանողների թիվը, մեծ է մանկավարժների խումբը, սակայն որի մի հատվածը մեկ տարի անց մտադիր է տեղափոխվել ԳՊՀ այլ բաժիններ: Ուսանողների հավաքագրման խնդիր կա, որի համար կազմակերպվել են այցելություններ դպրոցներ՝ մասնակից դարձնելով ԳՊՀ-ում սովորած և սովորող ուսանողներին: Այնուհետև զեկուցողն անդրադարձավ ֆակուլտետի ուսանողների առաջադիմության հարցերին՝ համապատասխան թվական տվյալներ ներկայացնելով ըստ բաժինների և կուրսերի: Տվյալները ներկայացվեցին նախորդ ուստարիների համեմա-տությամբ: Եղել են ուսանողների տեղափոխություններ, զգուշացումներ, հեռացումներ: Կրթական ծրագրերում կատարվել են փոփոխություններ, կազմակերպվել են տարբեր կարգի միջոցառումներ:

Ս. Ամիրխանյանը ներկայացրեց տնտեսագիտական ֆակուլտետի գործունեության հաշվետվությունը: Նշվեց, որ ֆակուլտետի գործունեությունը եղել է դեկավարության ուշադրության կենտրոնում, որի արդյունքում լուծվել են տեխնիկական-կազմակերպական որոշ հարցեր: Զեկուցողը նաև ներկայացրեց ուսանողական համակազմը, առաջադիմությունն ըստ մասնագիտությունների և բաժինների: Ս. Ամիրխանյանը նշեց, որ առաջադիմության ցուցանիշները ցույց են տալիս, որ դեռ աշխատանքներ կան անելու դեկանատի և դասախոսական անձնակազմի կողմից: Այդ տեսակետից պետք է ձեռնարկել զգաստացնող միջոցառումներ; Ֆակուլտետում աշխատանքները տարվում են ըստ զարգացման հայեցակարգի. իրականացվում են լրացուցիչ խորհրդասովորություններ, կազմակերպվում են բանավեճեր, ուսանողները մասնակցում են միջազգային ծրագրերի, հանդիպումներ են եղել ՀՀ կենտրոնական բանկում, «Պլաստիկ գրուպ», «Բարի սամարացի» կազմակերպություններում: Ուշադրությունից դուրս չեն մնացել ուսալանները և ծրագրերը: Դրանք վերանայվել և արդիականացվել են:

ԳՊՀ ընթացիկ հարցերի շուրջ ելույթ ունեցավ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյանը: Նա շնորհավորեց ուսխորհրդի, ՈԻԳԸ-ի

նորընտիր նախագահներին՝ հորդորելով ակտիվ աշխատանք կատարել: Անդրադարձավ ուսման վճարներին ու գեղջերին վերաբերող ընթացակարգերին, ուսման վարձերի հավաքագրման կառուցակարգերին, ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման հարցերին: Առաջարկվեց «ԳՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգում» կատարել փոփոխություն՝ Կարգի ներածության 2-րդ պարբերության մեջ «17 շաբաթ» բառակապակցությունը վերաշարադրել «16 շաբաթ» ձևով:

Նիստի աշխատանքն ամփոփեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը:

Հիմք ընդունելով ներկայացված հաշվետվությունները և ելույթները՝ գիտխորհուրդը

Որոշեց՝

1. ՀՄՖ պատմության ամբիոնի վարիչ Հ. Հարությունյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2. ՀՄՖ հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ Լ. Քուրքյանի հաշվետվու- թյունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

3. ՀՄՖ դեկան Հ. Ղաջոյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

4. ՏՖ դեկան Ս. Ամիրխանյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

5. Ուսանողներին ծանոթացնել ուսման վճարներին և գեղջերին վերաբերող ԳՊՀ ընթացակարգերում կատարված փոփոխություններին:

6. Ակտիվացնել կապերը ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ՝ նպաստելով նրանց աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

7. Հաստատել «ԳՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգում» առաջարկված փոփոխու- թյունը:

Գիտխորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտքարտուղար՝ Թ. Ասոյան